

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/4

9 հոկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 22.08.2012թ. թիվ 1003749 ստուգման ակտի դեմ <Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ նախկին տնօրենի 26.09.2012թ-ին բերված բողոքը, վերջինիս առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.06.2012թ. թիվ 1003749 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 22.08.2012թ-ին կազմվել է թիվ 1003749 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 900.000 դրամ: Ստուգման ակտի դեմ <Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ նախկին տնօրենը 26.09.2012թ-ին բերել է բողոք, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում մուտք է եղել 27.09.2012թ-ին:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի <է> կետի. <Բողոքը պետք է պարունակի բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը>:

Տվյալ դեպքում <Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ նախկին տնօրենի 26.09.2012թ-ի բողոքը բերվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի <է> կետի պահանջների խախտմամբ:

Իր հերթին, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի <ե> կետի. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը.>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի <ե> կետի դրույթներով <Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ նախկին տնօրենի 26.09.2012թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

<Կոմպոզիտ Մետալ> ՓԲԸ նախկին տնօրենի 26.09.2012թ-ին բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ